ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մայրենի հողից և նշանաւոր կենդրոններից հեռացած ու անջատուած լինելով, գտնւում եմ այնպիսի մի երկրում, ուր Հայ գրականութեամբ պարապողի համար ոչ նպաստաւոր պայմաններ կան և ոչ էլ բարեյաջող հանգամանքներ։ Ուրիշ խօսքով՝ հարուստ և ճոխ գրադարան-մատենադարան չկայ տեղս, գրաւոր աղբիւրներ և յիշատակարաններ չունիմ ես իմ ձեռքիս տակ, որոնցից կարողանայի օգտուել։ Ուստի իմ ազնիւ ընթերցողներս և քննադատներս եթէ պատմական սխալմունքներ և անճշտութիւններ նշմարելու լինեն իմ «Թռուցիկ ակնարկիս» էջերում, խնդրում եմ, թող ներողամտութեամբ նայեն և ակամայից սպրդած սխալանքներ համարեն։